Արձանագրություն N 2
«Հանրապետությունում հեմոդիալիզի ծառայության արդիականացման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/77» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արսեն Բաբայան
Հանձնաժողովի անդամներ Վահան Վահանյան, Արթուր Գևորգյան, Հայկ Խուրշուդյան,
Հանձնաժողովի քարտուղար Արմինե Գալուստյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ա. Բաբայան)

Ընդունել ի գիտություն, որ 27.11.2025թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի դեկտեմբերի 15-ին, ժամը 10:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի դեկտեմբերի 16-ին ժամը 10:00-ից:

11.12.2025թ հրավերում կատարվել է փոփոխություն: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի դեկտեմբերի 29-ին, ժամը 10:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2025 թվականի դեկտեմբերի 30-ին ժամը 10:00-ից: 2026 թվականի հունվարի 5-ին ժամը 10:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	***Մասնակցի անվանում***	*Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե*	***Կազմակերպության ՀՎՀՀ***
1	*«Նատալի Ֆարմ» ՍՊԸ*	*Ք. Երևան, Օհանովի փող 15/1, 010 74 42 12, natalipharm@bk.ru*	*01222567*
2	*«ԱՐ.ՄԵԴՏԵԽՆԻԿԱ» ՍՊԸ*	*Ք. Երևան, Մ. Հերացի 7, 010 56 99 99 armedtechnicallc@gmail.com*	*02604367*
3	*«Անիմեդ» ՍՊԸ*	*ք. Երևան, Ռոստովյան 13/81շ, բն. 94 , 041 55 16 16 animedllc@mail.ru*	*09221601*
4	*«Բարրի Թրեյդ» ՍՊԸ*	*Ք. Երևան, Ազաթանգեղոսի 6/4, 044 83 03 33, ashot@barry.am*	*00173389*
5	*Սուրեն Հակոբյան Գուրգենի ԱՁ*	*ք. Երևան, Չարենցի 68/22, 055 55 58 98 Surohakobyan1992@gmail.com*	*40201069*

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ա. Բաբայան)

Հրավերի վերաբերյալ 23.12.2025թ ստացվել են հարցումներ, որին 24.12.2025թ Համակարգով տրամադրվել են պարզաբանումներ (ներկայացվում են ստորև).

Հարցադրում N 1

Հարգելի պատվիրատու, խնդրում ենք պարզաբանել՝ 2-րդ չափաբաժնի մատակարարման մասով, արդյոք տվյալ չափաբաժնի մատակարարման ժամանակացույցում նշված 120 օրացույցային օրվա ընթացքում ապրանքի մատակարարումը ենթադրում է, որ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած պատվիրատուն կարող է ցանկացած պահի պատվիրել որոշակի քանակ օրինակ՝ 8 միավոր ապրանքի մատակարարում մեկ շաբաթից նշված հասցեով:

Պարզաբանում N 1

Ոչ չի ենթադրում: Մատակարարման ժամանակացույցում նշված 120 օրացույցային օրվա ընթացքում ապրանքի մատակարարումը նշանակում է, որ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մատակարար ընկերությունը պետք է 120 օրացույցային օրվա ընթացքում սահմանված քանակությամբ ապրանքները մատակարարի համապատասխան բուժ հաստատություններ: Հրավերով սահմանված մատակարարման ժամանակացույցով հստակ սահմանված է մատակարման ժամանակացույց յուրաքանչյուր խմբաքանակի համար՝ համապատասխանաբար 120, 180 և 240 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա. Բաբայան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Ա. Բաբայան)

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես,

- *«Նատալի Ֆարմ» ՍՊԸ*

Հարգելի մասնակից:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/77» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով Ձեր կողմից ներկայացված մասնակցության հայտը, արձանագրել է մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես, 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացված են հրավերով սահմանված բնութագրերի (ներառյալ ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը) նվազագույն պայմանների պատճենմամբ, առանց հստակեցնելու առաջարկվող ապրանքների բնութագրերը, ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ձեր կողմից ներկայացված հայտը՝ մասնավորապես շտկել և ներկայացնել 1-ին և 2-րդ չափաբաժիններով Ձեր կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ տեխնիկական բնութագրի հստակ չափանիշները, բացառելով «կամ», «համարժեք», «ոչ ավել», «ոչ պակաս», «պետք է» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, նշել հստակ երաշխիքային ժամկետը, ինչպես նաև հրավերի տեխնիկական բնութագրի բոլոր «լրացուցիչ պահանջներ» բաժնի մեջ պահանջվող արտադրողի հավաստումները, բացառելով «կամ», «համարժեք» և նմանատիպ այլ երկակի մեկնաբանվող արտահայտությունները, ինչպես նաև հստակեցնել նոր, չօգտագործված լինելու հանգամանքը: Առաջարկվող ապրանքների համար նշել հստակ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը՝ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան, առանց թարգմանության: Շտկված տարբերակները ներբեռնել էլեկտրոնային աճուրդ համակարգ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

07.01.2026թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և համակարգով ծանուցել մասնակցին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Ընդունել ի գիտություն՝

Մասնակիցը սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ համակարգով ներկայացրել է շտկման փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

20.01.2026թ.

Հանձնաժողովը որոշեց՝

«Նատալի Ֆարմ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Ա. Բաբայան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 30.12.2025թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են ստորև.

Հ/հ	գնման առարկայի անվանումը	քանակը	նախահաշվային գին		մասնակիցների անվանումը	մասնակիցների գնային առաջարկները							կարգավիճակը
						Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ				
			Միավորի գին	Ընդհանուր արժեքը		առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր	առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր	Միավորի գինը	
1	Հեմոդիալիզի սարքավորում	136	6,400,000	870,400,000	«Նապալի Ֆարմ» ՍՊԸ	870380000	0%	870380000	852972000	0%	852,972,000	6,271,852.94	
					«ԱՐ.ՄԵԴՏԵԽ ՆԻԿԱ» ՍՊԸ	880000000	0%	880000000	861676200	0%	861,676,200	6,335,854.41	
2	Հեմոդիալիզի բազկաթոռ	144	960,000	138,240,000	«Նապալի Ֆարմ» ՍՊԸ	138220000	0%	138220000	80000000	0%	80,000,000	555,555.55	
					«Անիմեդ» ՍՊԸ	138148560	0%	138148560	95000000	0%	95,000,000	659,722.22	
					«Բարրի Թրեյդ» ՍՊԸ	138240000	0%	138240000	112000000	0%	112,000,000	777,777.77	
					Սուրեն Հակոբյան Գուրգենի ԱՁ	250000000	20%	300000000	250000000	20%	300,000,000	2,083,333.33	Մերժված

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին

(Ա. Բաբայան)

20.01.2026թ.

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/77» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Բաբայան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/77» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հետ կնքել պայմանագիր 932,972,000 ՀՀ դրամ պայմանագրային գնով:

Հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/77» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին հայտարարության տեքստը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ *Ա. Բաբայան*

անդամներ՝ _____ *Վ. Վահանյան*

_____ *Ա. Գևորգյան*

_____ *Հ. Խուրշուդյան*

քարտուղար՝ _____ *Ա. Գալուստյան*